ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1157-Ա

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՈՂԱԿԱԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԻԳՐԱՆ ՌՈՄԻԿԻ ԽԵՉՈՅԱՆԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 363.0քմ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետով, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 18.05.2006թ.N912-Ն որոշման 11-րդ կետի «զ»-ենթակետով՝ ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին որոշմամբ և հիմք ընդունելով սույն կարգի 2-րդ դրույթը՝ սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ /2026HY7ZFE/ կառույցի օրինականացման 8-րդ կետը, Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի 15-րդ փողոցի 9/1 հասցեում 05-074-0006-0029 կադաստրային ծածկագրով գտնվող անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար նախատեսված 0.05 հա հողամասում, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տիգրան Ռոմիկի Խեչոյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ 2131429 տրված՝15.05.2009թ . / 2015թվականին ինքնակամ /2026HY7ZFE/ կառուցված ձեղնահարկով բնակելի տունը բավարարում է Հայաստանի Հանրապետության ՀՕ-117 ընդունված 10.06.2008թ, ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 7-ի N 719-Ն որոշմամբ, ՀՀ Կառավարության 18.05.2006թ.թիվ 912-Ն որոշման 11-րդ կետի «զ»

ենթակետով՝ ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին որոշմանը:

2. Տիգրան Խեչոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա 2015 թվականին ինքնակամ կառուցված /2026HY7ZFE/ երկհարկանի/ձեղնահարկով/ 363.0քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, որը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ՝ ճանաչել Տիգրան Ռոմիկի Խեչոյանի օրինական սեփական գույք:
3. Տիգրան Խեչոյանը պարտավոր է 363.0 քմ ընդհանուր արտաքին մակերեսով կառուցված ինքնակամ շինության/բնակելի տան/ համար, որի արժեքը կազմում է 374 000 /երեքհարյուր յոթանասունչորս հազար/ ՀՀ դրամ վճարել 900185061158 հաշվի համարին և համարել օրինական Տիգրան Խեչոյանի սեփական գույք:
4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ԱԴԱՄՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 14
ք. Ճամբարակ